ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙУНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫИ СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ
ЦЕНТР ПО ОБЕСПЕЧЕНИЮ КАЧЕСТВА ОБРАЗОВАНИЯ

MINISTRY OF EDUCATION AND SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

NATIONALUNIVERSITY OF ARCHITECTURE AND CONSTRUCTION OF ARMENIA

CENTER OF EDUCATION QUALITY ASSURANCE

02. Դեկտեմբերի. 2016 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016 թ.հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (ՃՇՀԱՀ) ընդունված ուսանողների հարցման արդյունքների վերաբերյալ

1. **Նախաբան**

ՃՇՀԱՀ-ի Կրթության որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ Որակի կենտրոն)՝ 2016 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին անցկացրել է հարցում՝ համալսարանի բակալավրիատի առաջին կուրսի ուսանողների շրջանում:

Հարցման նպատակն էր պարզել, թե համալսարանի բակալավրիատ ընդունված ուսանողները.

- Ինչու և ինչպես են ընտրել բուհը և իրենց մասնագիտությունը
- Ինչ նախնական կարողություններ և հմտություններ ունեն
- Ինչ ակնկալիքներ ունեն համալսարանից և մատուցվելիք որ ծառայություններն են կարևորում

Հարցումն իրականացնելու նպատակով համալսարանի Որակի կենտրոնը.

1. Համալսարանի ուսումնական մասի և հինգ ֆակուլտետների դեկանատների հետ համատեղ կազմել է համալսարանի բակալավրիատ ընդունված ուսանողների ցանկն՝ ըստ ֆակուլտետների և առանձին մասնագիտությունների:
2. Մշակել և հաստատել է «Բակալավրի առաջին կուրսեցիների հարցման հարցաթերթ» և՝ ըստ դասախոսների հետ նախապես համաձայնեցված «հարցումների անցկացման ժամանակացույց»-ի, իրականացրել է առաջին կուրսեցիների հարցում:
3. Վերլուծել և ամփոփել է լրացված հարցաթերթիկներում առկա տեղեկատվությունը, ինչի արդյունքում կազմվել է սույն հաշվետվությունը:

Հարցումն իրականացնելու համար մշակված 26 հարցից բաղկացած հարցաթերթը (տես՝ Հավելված 1), ներառում է ընդհանուր-կենսագրական բնույթի և ինքնագնահատման հարցեր, մասնագիտության ընտրությունը մեկնաբանող և համալսարանից ունեցած սպասելիքների վերաբերյալ հարցեր: Հարցաթերթում ներառված հարցերից երկուսը միտված են գնահատելու ուսանողների վերաբերմունքը ընդունող հանձնաժողովի նկատմամբ:

2. Ընդհանուր տվյալներ հարցման մասնակիցների վերաբերյալ

Հարցմանը մասնակցել է 2016-2017 ուստարում ՃՇՀԱՀ-ի բակալավրիատ ընդունված 353 ուսանող (համալսարան ընդունված ուսանողների 75%-ը): Հարցման մասնակիցների 55%-ը արական սեռի, իսկ 43%-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ են, իսկ հարցվածների 2%-ը չի նշել իր սեռը: Հարցման մասնակիցների 90%-ը (թվով 318 հոգի)՝ ՀՀ քաղաքացիներ են, 3%-ը (թվով 10 հոգի) ԼՂՀ, 3%-ը (թվով 8 հոգի) Սիրիայի քաղաքացիներ, իսկ 3-ական ուսանողներ՝ ՌԴ-ի, Վրաստանի և Իրանի Իսլամական հանրապետության քաղաքացիներ են: Հարցման մասնակիցների 86%-ը (թվով 304 հոգի)՝ մինչև համալսարան ընդունվելը սովորել է դպրոցում (որի 69%-ը՝ թվով 244 ավագ դպրոցում) ընդ որում, ավագ դպրոցում նրանց 18%-ը (թվով 44 հոգի)՝ մինչև համալսարան ընդունվելը սովորել են Մ. Աբեղյանի անվան հ. 3 ավագ դպրոցում: Հարցման մյուս մասնակիցները սովորել են քոլեջում (5%-ը, 16 հոգի), վարժարանում (3%-ը, 8 հոգի), Կոջոյան կրթահամալիրում (2%-ը, 6 հոգի), 6 ուսանողներ սովորել են ճեմարանում և 2 ուսանող՝ Պարսկական դեսպանատան դպրոցում: Հարցմանը մասնակցած ուսանողների 89%-ը (թվով 312 հոգի) դպրոցը/քոլեջն ավարտել է 2016 թվականին, 5%-ը (թվով 16 հոգի)՝ 2014 թվականին: Հարցման մյուս մասնակիցները դպրոցը/քոլեջն ավարտել են 2012 և 2013 թվականներին, իսկ հարցման մասնակիցների 3%-ը չի ցանկացել նշել դպրոցը/քոլեջն ավարտելու տարեթիվը: Հարցման մասնակիցների մոտ 98%-ը նշել է, որ իր մայրենի լեզուն հայերենն է, 2%-ը՝ ռուսերենը և հարցման մասնակիցներից միայն մեկ հոգի որպես իր մայրենի լոզու նշել է անգլերենը: Հարցման մասնակիցներից 245 հոգի (որից 142-ը երևանաբնակ) նշել է, որ սահուն կերպով տիրապետում է ռուսերենին, 75 հոգի՝ անգլերենին, իսկ 26 հոգի՝ այլ լեզուների: Հարցվածներից 74 հոգի նշել է, որ տիրապետում է միաժամանակ երկու, իսկ ևս 8-ը՝ միաժամանակ երեք օտար լեզուների:

Աղյուսակ 1. Օտար լեզուները, որոնց տիրապետում են հարցվածները

Հ/Հ	Օտար լեզու	Տիրապետում է
1	Ռուսերեն	245
2	անգլերեն	75
3	ֆրանսերեն	5
4	գերմաներեն	3
5	իտալերեն	2
6	արաբերեն	10
7	պարսկերեն	2
8	իսպաներեն	2
9	հունարեն	1
10	թուրքերեն	1

Ընդհանուր առմամբ հարցման մասնակիցների մեծամասնությունը՝ 56%-ը (197 հոգի), որպես մշտական բնակության վայր նշել է մայրաքաղաք Երևանը: Հարցման մասնակիցների 4%-ը (15 հոգի), նախընտրել է չնշել իր մշտական բնակության վայրը: Հարցման մասնակիցների բաշխումն ըստ սեռի և ըստ մշտական բնակության վայրի ներկայացվում է ստորև՝ Աղյուսակ 1-ում.

Աղյուսակ2. Հարցման մասնակից ուսանողներիբ աշխումն ըստ ֆակուլտետների

Ֆակուլտետ	**Սեռը**		**Մշտական բնակության վայրը**												
	Ար.	Իգ.	Երևան	Շիրակ	Լոռի	Տավուշ	Արագածոտն	Արարատ	Կոտայք	Գեղարքունիք	Արարատ	Վայոց Ձոր	Սյունիք	Վրաստան	ԼՂՀ
Կառավարման և տեխնոլոգիայի	53	22	30	5	0	4	8	2	8	4	3	3	3	1	1
Դիզայնի	13	54	51	0	2	0	0	1	0	3	2	2	2	0	0
Քաղ. տնտեսության և էկոլոգիայի	24	23	19	1	2	0	2	5	3	1	8	2	2	0	0
Շինարարության	45	14	25	2	2	4	3	0	6	7	2	1	2	2	1

Ճարտարապետության	50	48	72	0	1	4	1	8	1	1	1	2	6	0	0
Ընդհանուր	195	151	197	8	7	12	14	16	18	16	16	10	15	3	2

Հարցմանը մասնակցած ուսանողների 19%-ը նշել է, որ դպրոցում/քոլեջում ունեցել է գերազանց առաջադիմություն, 68%-ը լավ, իսկ 10%-ի առաջադիմությունը եղել է բավարար: Հարցվածների 3%-ը չի ցանկացել պատասխանել առաջադիմությանը վերաբերող հարցին: Հարցման մասնակիցների առաջադիմության պատկերն ըստ ֆակուլտետների, ներկայացվում է ստորև՝ աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Հարցման մասնակից ուսանողների առաջադիմության բաշխումն ըստ ֆակուլտետների

Հ/Հ	Ֆակուլտետ	Գերազանց	Լավ	Բավարար
1	Կառավարման և տեխնոլոգիայի	15	49	12
2	Դիզայնի	15	46	5
3	Քաղ. տնտեսության և էկոլոգիայի	4	39	3
4	Շինարարության	7	45	6
5	Ճարտարապետության	24	61	10
6	Ընդհանուր	65	240	36

Հարցման մասնակիցների 46%-ը (թվով 160 հոգի) նշել է, որ դպրոցում սովորելուն զուգընթաց հաճախել է որևէ սպորտի, 15%-ը (թվով 55 հոգի) հաճախել է երգի/երաժշտության, 13%-ը (թվով 46 հոգի) հաճախել է պարի, 18%-ը (թվով 64 հոգի) նկարչության խմբակների, իսկ 9%-ը (թվով 31 հոգի) եղել է դպրոցի աշակերտական խորհրդի կազմում:

Հարցման մասնակիցների 55%-ը նշել է, որ համալսարան ընդունվելու համար պարապել է կրկնուսույցի մոտ, ուսանողների 13%-ը՝ չի պարապել, իսկ հարցման մասնակիցների 32%-ը չի ցանկացել պատասխանել այս հարցին: Ըստ ֆակուլտետների դիտարկելիս պարզ դարձավ, որ Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետ ընդունված և հարցման մասնակից ուսանողների 91%-ը համալսարան ընդունվելու համար պարապել է կրկնուսույցի մոտ: Միևնույն ժամանակ ճարտարապետական ֆակուլտետի ուսանողների միայն 14%-ն է նշել, որ պարապել է կրկնուսույցի մոտ: Այս հարցի պատասխանն ըստ ֆակուլտետների, ներկայացվում է ստորև՝ աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Կրկնուսույցի հետ պարապել են

Հ/Հ	**Ֆակուլտետ**	Պարապել են	Չեն պարապել

1	Կառավարման և տեխնոլոգիայի	62/91%	13
2	Դիզայնի	55/81%	12
3	Քաղ. տնտեսության և էկոլոգիայի	41/87%	6
4	Շինարարության	23/38%	6
5	Ճարտարապետության	14/14%	8
6	Ընդհանուրը	195	45

3. Մասնագիտության ընտրությունը.

Հարցման մասնակիցների 81%-ը (թվով 262 հոգի) նշել է, որ բացի ՃՇՀԱՀ-ից այլ համալսարան չի դիմել, միևնույն ժամանակ հարցվածների 91.5%-ը (թվով 323 հոգի) նշել է, որ համալսարանն իրենց առաջին ընտրությունն է: Հարցման մասնակիցների 80%-ը դրական է գնահատել ընդունող հանձնաժողովի աշխատանքը, իսկ հարցվողների 92%-ը նշել է, որ համալսարանում փաստաթղթեր ներկայացնելիս դժվարություններ չի ունեցել:

Հարցման մասնակիցների 38%-ը՝ թվով 137 հոգի նշել է, որ բուհն ընտրել է իր կամքով, 36%-ը՝ թվով 128 հոգի) նշել է, որ բուհն ընտրել է ծնողների խորհրդով, հարցվածների միայն 4%-ն է նշել, որ բուհ ընդունվել է պատահաբար: Ստորև՝ Աղյուսակ 2-ում ներկայացված են հարցմանը մասնակցած ուսանողների պատասխանները մասնագիտության ընտրության հետ կապված:

Աղյուսակ5. Մասնագիտության ընտրությունը

Հ/Հ	Հարց	Մերհամալսարանից բացի քանի այլ համալսարան եք դիմել	Մեր համալսսարանը Ձեր որ ընտրությունն էր
	Ֆակուլտետ	Այլ համալսարան չեն դիմել	Առաջին ընտրություն
1	Կառավարման և տեխնոլոգիայի	**50**	**68**
2	Դիզայնի	**65**	**66**
3	Քաղ. տնտեսության և էկոլոգիայի	**15**	**66**
4	Շինարարության	**46**	**58**
5	Ճարտարապետության	**86**	**90**
6	Ընդհանուրը	**262**	**348**

Հարցման մասնակիցների 36%-ը (թվով 128 հոգի) նշել է, որ համալսարան ընդունվել է ծնողների և ընտանիքի անդամների խորհրդով, 10%-ը՝ համալսարանական ընկերների

խորհրդով, իսկ հարցման մասնակիցների 39%-ը նշել է, որ համալսարան ընդունվել է սեփական կամքով:

Աղյուսակ6. Համալսարանի ընտրությունը

Հ/Հ	**Ֆակուլտետ**	Ծնողների խորհրդով	Ընկերների խորհրդով	Իմ կամքով
1	Կառավարման և տեխնոլոգիայի	33	6	25
2	Դիզայնի	23	11	29
3	Քաղ. տնտեսության և էկոլոգիայի	23	6	11
4	Շինարարության	22	4	27
5	Ճարտարապետության	27	9	45
6	Ընդհանուրը	128	36	137

Ընդհանուր առմամբ հարցման մասնակիցների շրջանում՝ բուհն իրենց կամքով ընտրած ուսանողներն ըստ ֆակուլտետների բաշխված են հավասարաչափ.

Կառավարման և տեխնոլոգիայի- 32%

Դիզայնի- 43%

Քաղ. տնտեսության և էկոլոգիայի-23%

Շինարարության-45%

Ճարտարապետության-45%

Բացառություն է կազմում միայն քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետը, որտեղ բուհն իրենց կամքով ընտրել են հարցված ուսանողների միայն 23%-ը:

Հարցման մասնակիցների 74%-ը (թվով 262 հոգի) նշել է, որ իր մասնագիտությունն ընտրել է, որովհետև ցանկանում է այս ոլորտի մասնագետ դառնալ, 11%-ը նշել է, որ իր մասնագիտության լավագույն կրթությունը տալիս է այս համալսարանը, իսկ հարցվածների 3%-ը նշել է, որ համալսարանն ու մասնագիտությունն ընտրել է պատահաբար: Հարցվածների 6%-ը համալսարանն ընտրել է, քանի որ ճանաչում է մասնագիտության շնորհիվ հաջողության հասած անձանց, իսկ հարցվածների 4%-ը նախընտրել է չպատասխանել այս հարցին: Հարցման մասնակիցներից միայն 4 հոգի է նշել, որ մասնագիտությունն ընտրել է ուսման վարձի հասանելի լինելու պատճառով:

4. Ակնկալվող գիտելիքները, կարողությունները և հմտությունները

Հարցման մասնակիցների 56%-ը (թվով 199 հոգի) պատասխանել է հարցաշարի համապատասխան հարցին (հարց 19) ընդհանուր առմամբ տալով 423 պատասխան

ակնկալվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների վերաբերյալ: Հարցման մասնակից ուսանողների 52%-ը նշել է, որ ուսումնառության ընթացքում ակնկալում է ձեռք բերել մասնագիտական գիտելիքներ և դառնալ ոլորտի լավ մասնագետ, իսկ 23%-ը նշել է, որ համալսարանի շնորհիվ ցանկանում է դառնալ կիրթ անձնավորություն: Հարցման մասնակիցներից 21 ուսանող նշել է, որ համալսարանից ակնկալում է սոցիալիզացիայի, ինքնադրսևորման և արդյունավետ շփման հնարավորություն: Հարցման մասնակիցների 44%-ը (թվով 154 հոգի) նախընտրել է չպատասխանել այս հարցին Հարցման մասնակիցների պատասխանների ամբողջական ցանկը ներկայացվում է ստորև՝ աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. Ակնկալվող գիտելիքներ

Հ/Հ	Ակնկալվող գիտելիք	Պատասխանների թիվը	Բաժինը
1	Մասնագիտություն	11	6%
2	Կրթված անձ	42	21%
3	**Մասնագիտական գիտելիքներ**	**104**	**52%**
4	Մաթեմատիկա	25	13%
5	**Օտար լեզու**	**46**	**23%**
6	Նախագծի կառավարում	24	12%
7	**Գծագրություն**	**51**	**26%**
8	Սոցիալիզացիա	21	11%
9	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	1	1%
10	**Նկարչություն**	**49**	**25%**
11	Ֆիզիկա	23	12%
12	Քիմիա	6	3%
13	Հոգեբանություն	3	2%

5. Ուսանողների ինքնագնահատականը կարողությունների վերաբերյալ

Հարցման մասնակիցների 90%-ը (թվով 317 հոգի) պատասխանել է իր ունեցած նախնական կարողությունների ինքնագնահատմանը վերաբերող հարցաշարի համապատասխան հարցին (հարց 20): Հարցաշարում այս խմբի հարցերի գնահատման համար ընտրված էր 1-ից 3 բալանոց սանդղակ, որտեղ մեկը նշանակում է լիովին

պատրաստված լինել, իսկ 3-ը՝ բոլորովին պատրաստված չլինել: Հարցման մասնակիցների 50%-ը բարձր գնահատական է տվել թիմային աշխատանք կատարելու կարողությանը, մինչդեռ ամենացածր գնահատականը տրվել է թիմակիցներին առաջնորդելու կարողությանը. Հարցման մասնակիցների 28%-ը նշել է, որ բոլորովին պատրաստված չէ այս առումով: Հարցման մասնակիցների 49%-ն իրենց համակարգչային կարողություններին միջին գնահատական են տվել: Հարցման մասնակիցների գնահատականներն ըստ առանձին կարողությունների ներկայացվում են ստորև աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. Նախնական կարողությունների ինքնագնահատում

Հ/Հ	Կարողություն	1	2	3	Միջին գնահատ.
1	Արտահայտվելուներկայանալուկարողություն	132 42%	138 44%	33 10%	**2,3**
2	Մտքերի՝գրավորշարադրմանկարողություն	124 39%	136 43%	46 14%	**1,7**
3	Տեղեկատվությանվերլուծությանկարողություն	119 37%	143 45%	42 13%	**1,8**
4	Թիմայինաշխատանքիկարողություն	158 50%	97 30%	50 16%	**1,7**
5	Թիմակիցներինառաջնորդելուկարողություն	120 38%	135 42%	89 28%	**1,8**
6	Օտարլեզվովգրելունխոսելուկարողություն	110 35%	139 44%	53 17%	**1,8**
7	Համակարգչայինկարողություններ	96 30%	156 49%	50 16%	**1,9**

Ընդհանուր առմամբ, բոլոր կարողությունների վերաբերյալ ուսանողների գնահատականները մոտենում են 2-ին, ասել է թե՝ ուսանողներն իրենց՝ վերոնշյալ կարողություններին միջին գնահատական են տվել:

6. Հարց 21. Ուսման վարձի վերաբերյալ

Հարցման մասնակիցների 20%-ը (թվով 69հոգի) նշել է, որ համալսարան ընդունվել է պետպատվերի շրջանակներում, իսկ 60%-ը (թվով 214 հոգի) պատասխանել է, որ ուսման վարձն ամբողջությամբ վճարելու են ծնողները, իսկ ևս 20%-ը (թվով 70 հոգի) չի ցանկացել պատասխանել այս հարցին: Հարցման մասնակիցներից 3 հոգի նշել է, որ իր ուսման վարձը փոխհատուցելու է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը, ևս 3 հոգի նշել են, որ իրենց ուսման վարձը փոխհատուցվելու է մարտական հերթապահությանը մասնակցելու պատճառով:

7. Ձեզ համար ինչքանով է կարևոր, որ համալսարանը մատուցի բարձրորակ ծառայություններ

Հարցման մասնակիցները նշել են, թե որքանով են կարևորում համալսարանի ծառայությունները 11 հիմնական ոլորտներում: Հարցման մասնակիցներն ամենաշատը՝ 19% (թվով 31 հոգի) բոլորովին չեմ կարևորում գնահատականն են տվել վերջին՝ Առողջապահական և հոգեբանի ծառայություններ հարցին: Ուսանողներն ամենամեծ կարևորությունը տվել են առաջին՝ Խորհրդատվություն՝գիտակրթական, անձնականկարիերայիզարգացմանհարցերում ծառայությանը՝ 93% (թվով 294 հոգի): Ուսանողների գնահատականները մատուցվելիք ծառայությունների կարևորության վերաբերյալ առավել մանրամասն ներկայացվում է ստորև՝ աղյուսակ 9-ում:

Աղյուսակ9. Մատուցվելիք ծառայությունների գնահատումը

Հ/Հ	Ոլորտ	Շատ կարևոր է	Կարևոր է	Կարևոր չէ	Բոլորովին կարևոր չէ	Միջին գնահատ.
1	Խորհրդատվություն՝գիտակրթական, անձնականկարիերայիզարգացմանհարցերում	185 **58%**	109 **35%**	6 **2%**	13 **6%**	**1,5**
2	Ֆինանսականաջակցություն	143 **45%**	123 **39%**	36 **11%**	14 **5%**	**1,8**
3	Կրթաթոշակներիտրամադրում	176 **55%**	107 **34%**	22 **7%**	12 **5%**	**1,6**
4	Ուսանողներիաշխատանքիամալսարանում	133 **42%**	139 **44%**	30 **11%**	14 **3%**	**1,8**
5	Համակարգչայինծրագրերիուսուցում	188 **59%**	99 **31%**	20 **6%**	9 **4%**	**1,5**

6	Ինտերնետ, էլ. Փոստնէլ. Ուսուցում (Moodle)	109 **34%**	141 **44%**	48 **16%**	16 **6%**	**1,9**
7	Օտարլեզվիուսուցում	177 **57%**	105 **33%**	15 **5%**	14 **5%**	**1,6**
8	Գրադարան	150 **48%**	131 **41%**	18 **6%**	17 **5%**	**1,7**
9	Մշակութայինևայլմիջոցառումներ	109 **34%**	136 **43%**	52 **16%**	18 **6%**	**1,9**
10	Իրավաբանական խորհրդատվություն	90 **26%**	151 **45%**	55 **22%**	19 **7%**	**2,0**
11	Առողջապահական և հոգեբանի ծառայություններ	105 **34%**	127 **41%**	47 **26%**	31 **19%**	**2,0**

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ ուսանողները կարևորում են ներկայացված բոլոր ծառայությունները, քանի որ ինչպես երևում է աղյուսակ 9-ից, բոլոր ծառայությունների միջին գնահատականը տատանվում է 1-ից 2-ի սահմաններում: Այնուամենայնիվ, ուսանողներն առավել կարևորում են, որ համալսարանը բարձրորակ ծառայություններ մատուցի գիտակրթական, անձնական և կարիերայի զարգացման հարցերում խորհրդատվության տրամադրման, օտար լեզուների և համակարգչային ծրագրերի ուսուցման ոլորտներում:

8. Եզրակացություններ

1. Հարցման մասնակիցների 80%-ը (թվով 280 հոգի) դրական է գնահատել ընդունող հանձնաժողովի աշխատանքը (միջին գնահատականը 1.3) և ուսանողների 92%-ը (թվով 325 հոգի) նշել է, որ ոչ մի դժվարություն չի ունեցել փաստաթղթերը համալսարան ներկայացնելիս:

2. Հարցման մասնակիցների 36%-ը համալսարանն ու մասնագիտությունն ընտրել է իր կամքով, ընդ որում, ըստ ֆակուլտետների դիտարկելիս, այս ցուցանիշն ամենաբարձրն է Ճարտարապետության և շինարարության ֆակուլտետներում (45%), իսկ ամենացածրը քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետում (23%) է:

3. Հարցման մասնակից ուսանողներն առավել կարևորում են, որ համալսարանը բարձրորակ ծառայություններ մատուցի գիտակրթական, անձնական և կարիերայի զարգացման հարցերում խորհրդատվության տրամադրման, օտար լեզուների և համակարգչային ծրագրերի ուսուցման ոլորտներում:

4. Հարցման մասնակիցները համալսարանից ակնկալում են ստանալ առավելապես մասնագիտական գիտելիքներ, օտար լեզվի, գծագրության և նկարչության գիտելիքներ՝ անկախ մասնագիտությունից:

5. Հարցման մասնակիցների 43%-ը նշել է, որ ցանկանում է մասնակցել ուսանողական խորհրդի աշխատանքներին, իսկ 57%-ը նշել է, որ չի ցանկանում կամ ժամանակ չունի մասնակցելու ուսանողական խորհրդի աշխատանքներին:
6. Հարցման մասնակիցների բացարձակ մեծամասնությունը (87%) դպրոցում/քոլեջում սովորել են գերազանց (19%) կամ լավ (68%):
7. Հարցման մասնակիցներն իրենց կարողությունները գնահատելիս ամենացածր գնահատականը տվել են արտահայտվելու և ներկայանալու կարողությանը, իսկ ամենաբարձրը՝ թիմային աշխատանքի կարողությանը: